ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Առարկա՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշակերտ(ուհի)ներ՝

Գոռ Սարգսյան

Էլեն Ասլանյան,

Լուիզա Հունանյան,

Վրեժ Վարդանյան,

Հրաչ Ավագյան,

Արեգ Պետրոսյան,

Ալեն Մելքոնյան



Դասարան՝ 7բ

Ուսուցչուհի՝ Ս. Ասլանյան

Բովանդակություն

1. Ուրախ և տխուր հուշեր Համո Սահյանի կյանքից 3

1.1 Համո Սահյանի քրոջ՝ Հասմիկ Գրիգորյանի հուշերը..... 3

2. Հովհաննես Այվազյանի հուշերից..... 7

3. Այլ դրվագներ Ազգային բանաստեղծի մասին..... 9

4. Հուշեր Համո Սահյանի մասին..... 9

1. Ուրախ և տխուր հուշեր Համո Սահյանի կյանքից

1,1 Համո Սահյանի քրոջ՝ Հասմիկ(Հալկանուշ) Գրիգորյանի հուշերը

Համոն այս պատմությունն ամեն անգամ պատմելիս՝ լաց էր լինում

1920-ական թվականներն էին, ծնողներս գնացել էին սար խոտհնձի: Երեխեքս տանն էինք մնացել: Ընկանք մեծ եղբորս՝ Համոյի հետևից և գնացինք դաշտ՝ սինձ ուտելու: Մեր տան ճամփին նոր թխվող լավաշի բույր էր տարածվել: Կանգնել-չէինք կարողանում շարժվել: Հոտը արբեցրել էր բոլորիս: Նայում ենք՝ թոնրատան ծուխը երկինք էր ելել:Հանկարծ նոր թխած լավաշի դարսը թևին գցած՝ մի կին դուրս եկավ, պառավ հացթուխն էր: Տեսնելով սովահար փոքրիկներիս կանգնած՝ իր կողմը նայելիս, երևի մեզ խղճալով, երկու լավաշ տվեց: Սոված էինք, բայց Համոն չթողեց, որ ուտենք, ասեց՝ մենք սինձ կուտենք, պահենք մեր հորն ու մոր համար: Չկերանք, պահեցինք մինչև հայրս ու մայրս եկան: Լավաշը Համոն ծոցից հանեց, տվեց իրենց:

Ասին՝ դուք կերե՞լ եք, ասինք՝ չէ:

Մայրս ու հայրս լաց եղան:

Համոն այս պատմությունն ամեն անգամ պատմելիս՝ լաց էր լինում, մի օր էլ, արդեն յոթանասուն էր, ասեց՝ Հասմիկ, էն երկու լավաշն արեց, որ ես բանաստեղծ դարձա...

Եղբայրս շատ էր սիրում պապիս, տատիս: Մեր գերդաստանում ընդունված էր ավագությունը: Տան գլխավորին բոլորս էինք սիրում ու ենթարկվում: Մեր տանը հայրս՝ պապիցս հետո, Աստված էր, նրա ամեն մի խոսքը՝ ճշմարտություն և սրբություն:

Խչիբաբոնց ծուխը

1991 թվականն էր: Համոն եկել էր Լոր, բայց մինչև Լոր գնալը միշտ Դարբասում կանգնում էր, գալիս իմ տուն, ժամերով նստում, մեզ հետ զրուցում...

Ամեն անգամ Դարբասից Երևան գնալիս՝ իր ընկերներին լաց լինելով խնդրում էի, որ Համոյին լավ նայեն, որ ես հեռու եմ, ձեռս-ոտս չի հասնում... Այնքան էի լացում

ու խնդրում, որ ընկերներն էլ չէին դիմանում, աչքները սրբում էին... իսկ Համոն ձեռքը դեպի սիրտն էր տանում, ասում՝ վատացավ սիրտս, Հասմիկ, հերիք է, ուզում ես հիմա ապրե՞մ, թե՝ մեռնեմ...

Համոս արդեն հիվանդ էր, միշտ փաթաթված, հագալուց,անընդհատ ծխելուց...

Վերջին անգամ, որ Լորից գալուց՝ ճամփեցի, ասեց՝ Հասմիկ, կարող է էլ չկարողանամ Լոր գալ, մեր հոր դուռը փակ չթողես, մեկ-մեկ գնա դուռը բաց արա, մեր հոր Սահակի ու Խչիբաբի /Խաչի պապի/ ականջը ձենի ա լինելու, ձեն տուր, կարոտ չթողնես...

Ոտերիս, կոներիս զարկեցի լացս դրի, ասի՝ Համո, հաշվի՝ ինձ արդեն թաղեցիր, Խչիբաբոնց ծուխը դու ես, քվերքիդ քույրերիդ/ գլուխը մի կտրիր...

Համոս երեսը թաքցրեց վզի շալի մեջ դուրս եկավ՝ ես էլ մինչև մեքենան շարժվելը՝ ծնկներիս տալով՝ հետևից ընկած ...

Համոյից հետո

...Համոյից հետո, հաճախ եմ գնացել Լոր, բացել եմ մեր հոր տան դուռը և ամեն անգամ լաց լինելով՝ դուրս եկել: Բայց ամեն գնալուց հետո սիրտս հանգստանում է, թեթևանում, ասես Համոյի օրհնանքն եմ ստանում...

Ասում եմ՝ Տեր Աստված, հոգիս առ էլի, սիրտս մղկտում է, էլ չեմ կարողանում դիմանալ: Քսան տարի է արդեն առանց Համո գնում-գալիս եմ, էլ մեծ եմ, ես էլ չեմ կարողանում...

Հիմա էլ սարքել են, շինել, ցանկապատել, արդեն հորս ու Խչիբաբոնց հոտն ու շունչն էլ ա վերացել էդ տնից... Թանգարան են սարքել հորս տունը, էլ համ ու հոտ չկա...

Համոն ասում էր՝ Հասմիկ, ես ամաչում եմ, որ հորիցս հինգ տարի ավել եմ ապրել, ինքը 73-ում մեռավ, ես արդեն 79-ն եմ...Բա ես ի՞նչ ասեմ, Համո, տես քեզանից ինչքան ավել ապրեցի՝ 12 տարի: Ասում էր՝ Հասմիկ, դու պիտի երկար ապրես. համ մեր քույրերին ես պահել, համ էլ՝ մեր հորը, ումբուրդ /կյանքդ/ երկար է լինելու...

Ավել չեմ ուզում, գոնե մինչև Համոյիս 100-ամյակն էլ ապրեմ, նույն օրն էլ՝ գիշերը, մեռնեմ:

Համոյի վերջին խնդրանքն էլ կատարեմ, ասում էր՝ հարյուր ամյակիս, Հասմիկ, կգաս գլխիս վերև կանգնես, մեր տան շունչը զգամ...

Զայրացած ու հոմորով

Շուտանց էր, Համոն եկել էր գյուղ: Հլա էս երկիրը չէր քանդվել, մի 5-10 տարի առաջ էր:

Մի հարց ունեի ամուսնուս առաջին կնգա երեխու հետ կապված : Համոյին խնդրեցի էդ հարցով զբաղվել, գործը գլուխ բերել՝ հենց Երևան գնա:

Համոս միանգամից պայթեց, կարծեցի ախպերս գժվել ա: Ինչքան կատաղություն ուներ՝ դուրս թափեց: Ասեցի՝ Համո, ես մեղա, մի հատ էլ խփիր /խփելու մասին մի բան էլ կպատմեմ.../, բալքիմ դինջանաս:

Ասաց՝ Հասմիկ, ստեղս ես հասցրել...

Ասաց ու կոկորդը ցույց տվեց: Քոռանամ ես:

-Դու չգիտե՞ս, որ ես չեմ սիրում սրան-նրան հարցերով դիմել, բոլ ա էլի, հերիք ա...Հոգիս բերանիցս բերեցիք...

Ձենս կտրեցի, ասի՝ թող դինջանա, նոր կասեմ...Բայց Համոն չէր հանգստանում, վերջում էլ ասաց.

-Հասմիկ, քեզ մոր տեղ եմ ընդունում, բայց դու արդեն պուլերը /հացի գնդեր/ կոխ ես տալիս...

Խչիպապուն արևը վկա, էս անգամ թողնելու եմ, գլուխս առնեմ ձեզանից փախչեմ...Որ ոչ մեռնելս իմանաք, ոչ էլ՝ ապրելս...

Սիրտս կանգ առավ: Կարծեցի՝ հենց հիմա գնալու է...Մոտեցա Համոյիս գլուխը գրկեցի, ասացի՝ ուր էլ գնաս, հետիցդ գալու եմ... Քու քվոր աչքերը քեզ համար քոռանան, առանց քեզ ես ո՞նց կարամ ապրեմ...Հենա հոգիս առ էլի...Առանց Համո ախպոր ես էն աղբահորի շունն եմ...

Աչքերը լցվեցին, բայց տեսնում եմ՝ նեղացել է և հետս չէր խոսում: Առանց հաց ու ջուր կտրել, գնաց Լոր:

Ետ գալուց՝ Դարբասում կանգ առավ, երեսս պաչեց ու աչքերը ինձանից փախ-փախ անելով՝ գնաց: Արդեն նեղացած չէր, տեսա, բայց մեջքը դեռ գետնով չէր տալիս, խռով էր ցույց տալիս:

Միրտս շատ ցավաց. ախր եղբայրս բաժանված էր, մենակ էր ապրում...ես էլ մի կողմից եմ դարդ տալիս...Խիղճս տանջեց, ասեցի՝ Համո, քվորդ իրեսը քու վետիդ տակ, ինչ ասել եմ՝ մոռացիր...

Էդ մասին էլ չխոսեցի: Երկու-երեք օր չանցած՝ էդ հարցը Համոս լուծեց, բայց զանգեց, ասեց՝ Մոսկվայում եմ: Ձմեռ էր, ցուրտ: Հազում էր արդեն:

Աչքերս մթնեցին, աշխարհը գլխիս փուլ եկավ. ասեցի՝ էս ա որ կա, Համոն մեզանից փախել ա: Համոն եթե Խչիպապի արևով երդում ա ուտում, պրծավ...Լացս դրի գլխիս.

-Համո, վետիդ /ոտք/ տակի վեղը /հող/ տառնամ, տեղ թող՝ արի...Խըչիպապի արևն եմ ասում՝ էլ քեզ բան չեմ ասի...Քուրդ մեռնի էլ՝ էն Աստուծը, քեզ նեղություն չի տա էլ...

Ե՞րբ ես գալու,- հարցրի: Լուրջ-լուրջ՝ թե՝ էլ չեմ գալու, Հասմիկ, ստեղից էլ դենն եմ գնալու...որ տեսնամ երևում եք՝ էլի եմ գնալու...

Բա ո՞նց կլինի, Համո, ասեցի՝ դու էդպես հիվանդ, ասթմադ բռնած, խզխզալի...

Ինձ կորցրի...Լեզուս լալկված, ոնց եղավ՝ լեզվիցս թռավ, ասեցի՝ Համո, մի բան կլինի, այ քըրամեռ, քեզ ասում եմ վեր կաց, տեղ թող եկ վաթանդ...

Լսեցի՝ Համոն քահ-քահ ծիծաղում է...Հասկացա, որ շուլուղ է արել:

Հիմա էլ լաց եղա՝ ուրախությունից...Համոս ծիծաղեց պրծավ, հետն էլ թե՝ այ իմ միամիտ քեր /քույր/, բա ես կարա՞մ առանց ձեզ ապրել...առանց ձեր տանջանքների...

Միշտ պատմում էր, ծիծաղում, ինձ էլ ասում՝ Հասմիկ, մի ընկերներիս պատմիր՝ թե էն ոնց եղավ, որ ինձ հրավիրեցիր՝ հայրենիքում մեռնելու:

Հասմիկ Գրիգորյանը մահացել է 2016 թ.

2. Հովհաննես Այվազյանի հուշերից

Վերջին օրը

...Համո Սահյանը պառկած է՝ դեմքը պատի կողմը...

Հիվանդասենյակում են Համո Սահյանի կինը՝ Սվետլանան, քույրերը, երկու դեռահաս աղջիկ զարմուհիները, տարիների մտերիմներ քանդակագործ Գետիկ Բաղդասարյանն ու իր կինը՝ Օդենան:

...Շնչարգելություն: Այրոցքը խեղդում է: Թույլ ձեռքը գնում է կրծքավանդակի աջ կողմին ու կծկվում ցավից: ...Թթվածինն օգնեց: Աչքերը բացեց: Ներկաները քաջալերում էին ինձ, որ խոսեմ:

— Գիրքը համարյա վերջացրի, Վարպետ: ...Երկուշաբթի կհանձնեմ հրատարակչություն:

— Հա՞, -ուրախացավ:

— «Նաիրիի» ղեկավարությունը խոստացել է շատ արագ՝ մի երկու ամսում հրատարակել Ձեր «Հատընտիրը»:

— Շատ շնորհակալ եմ, -թույլ ժպտաց: Երկու մատը վեր պարզեց ու իջեցրեց:

— Լավ նշելու ենք, -ասացի:

— Ինձ երկու օր է մնացել, – նորից վեր պարզեց գույգ մատը:

...Ոռպեն մեկ, թվում է վայրկյանը մեկ՝ այրոցք: Դեմքն անընդհատ ծամածռվում է շնչափողի ցավերից...

— Չի անցնում էս այրոցքը... Սպանում է... Երկու անգամ ուժեղ դեղ սրսկեցին... Չօգնեց...

Ու վերադառնում է մեր զրույցի շարունակությանը.

— Սվետան էլ մյուս գիրքը կարդաց, վերջացրեց... Տեսա՞ր չէ, հենց էստեղ հիվանդանոցում սրբագրեց... Մերուժանը եկավ տարավ... Տեր-Գուլանյան...

Համո Սահյանը որոշել էր վերնագիրը «Վերջին լեռնանցք» դնել: Հետո իր նախավերջին օրը փոխել էր, դարձրել «Ինձ բացակա չդնեք»:

— Մանսուրյանն ավարտեց թումանյանական շարքը, -ասացի, -չորս երգ Քուչակից, չորս երգ՝ Թումանյանից, չորս երգ՝ Տերյանից, չորս երգ՝ Սահյանի՛ց:

— Հը՛մ, – ակնարկս հասկանալու նշան տվեց:

— Լավն են, չէ՞, երգերը, -հարցրեց Համո Սահյանը, – ափսոս չեմ լսել:

...Սկսեց թվարկել՝ «Արագիլ», «Ուլունք», «Ճնճղուկներ», «Կանաչ ախպեր» ...

— Տիգրանն ու՞ր է, ինչու՞ չեկավ... Ասա՝ կարոտում եմ իրեն... Ասա պաշտում եմ իրեն...

Տիգրան Մանսուրյանին չէր տեսել ընդամենը մեկ շաբաթ: Նախորդ ուրբաթ միասին էինք եղել հիվանդանոցում:

— Գրքիս վերնագիրը՝ «Քարե պատարագ», – երկու բառն էլ շեշտեց հատ-հատ:

Վերջին օրերը վերնագրի վրա էր տանջվում ու ամենալավը չէր գտնում... Ահա: Վերջին ժամերին: «Քարե պատարագ»:

Մինչեւ վերջին պահը միտքը՝ պարզ: Մինչեւ վերջին պահը՝ բանաստեղծ: Մինչեւ վերջին պահը ստեղծագործության մեջ: Մինչեւ վերջին պահը՝ անտրտունջ:

...Կողքի պատշգամբից Տիգրան Մանսուրյանի կինոերաժշտության հնչյունները լսեցինք... Սվետան միացրեց ռադիոն: Մանսուրյանի հնչյունները ողողեցին Համո Սահյանին:

Ժամը 20.30-ն էր: Ներս եկավ Համո Սահյանի ավագ որդին՝ Նաիրին: Ներքին տառապանքը թաքցրած, ասաց.

— Հայրիկը քնել է, հանգիստ թողեք, թող քնի: Մենյակից դուրս եկեք բոլորդ:

Վերջին անգամ ձեռքս դրի Համո Սահյանի ոտքին՝ տպավորությունս նույնն էր՝ սառչում է: Վերջին հրաժեշտի հպումն էր: Վերցրեցի Սվետայի տված՝ Համո Սահյանի վերջին տուփ ծխախոտը՝ որպես հիշատակ:

...Իմ գնալուց հետո շնչել էր եւս երեք ժամ 10 րոպե առանց գիտակցությունը կորցնելու: Բայց այլեւս չէր խոսել...:

Համո Սահյանը վախճանվեց 1993թ. հուլիսի 17-ին:

3, Այլ դրվագներ Ազգային բանաստեղծի մասին

Համո Սահյանն ասաց.

–Ավետիք Իսահակյանը մի անգամ գրողների միությունում ասել է առաջին կնոջս. «Բանաստեղծները երեք տեսակի են լինում. տիեզերական, դա ես եմ. «Դար է եկել Արարատի սեգ կատարին ու անցել»: Համամարդկային, Վահան Տերյանն է. «Ասում եմ ես՝ մնաք բարով»: «Ազգային...»:

Եվ Իսահակյանը բազմանշանակ լռել է:

–Ազգայի՞նը ով է բա, Վարպետ,–հարցնում է կինս:

–Ազգայինն էլ քո ամուսինն է. «Նաիրյան դալար բարդի»...

–Այդպես է ասել Իսահակյանը: Պահ է, միտքն այդպես է եկել, այդպես է ասել պահի ազդեցության տակ,–Համո Սահյանը ամաչելով հասկացրեց, որ լուրջ չընդունեմ Իսահակյանի ասածը եւ ավելացրեց.–Ոնց թե, բա Թումանյա՛նը, բա Չարե՛նցը... Թումանյանը ազգային չէ՞ր, համամարդկային չէ՞ր, տիեզերական չէ՞ր... Թե ուզում ես իմանալ՝ Թումանյանը ե՛ւ ազգային է, ե՛ւ համամարդկային է, ե՛ւ տիեզերական. բոլորը միասին է... Պատմությունը միայն քեզ եմ ասում, ուրիշին չեմ պատմել:

4. Հուշեր Համո Սահյանի մասին

«Մի տեղ իշխան ու տեր, մի տեղ համեստ հովիվ»

Հայրս հասարակ մարդ էր, համեստ, ինչ-որ տեղ նաեւ՝ ամաչկոտ: Իր մեջ էդ եսը, էգոն չկար: Ինչպես բոլորն էին, այնպես էլ ինքն էր: Բայց, միեւնույն ժամանակ, նրա ամեն ինչն էր տպավորիչ: Նրա ամեն խոսքը գնում, հասնում էր մինչեւ հոգուդ հատակը: Խորհուրդ չէր տալիս, ուրիշ տեսակ մարդ էր... Նրա ակնհայտ

սովորություններից մեկը շատ ծխելն էր: Միշտ էր ծխում. օրը մի քանի տուփ: Մաման ինձ ու եղբորս սովորեցրել էր, որ եթե պապան աշխատում էր, մենք պետք է լուռ մնայինք, բայց հայրս պահանջկոտ չի եղել երբեք եւ ոչ մի հարցում: Իր ներկայությունն արդեն իսկ հերիք էր, որ մենք խելոք մնայինք:

«Ես այն եմ եղել, ինչ որ եղել եմ»

Հայրս գործի մեջ պարփակված մարդ էր: Երբ դեռ փոքր էինք, այդ ժամանակվանից մեզ համար Թումանյան ու Բակունց էր կարդում, կաթիլ-կաթիլ լցնում մեր մեջ: Իսկ, առհասարակ, նա համարում էր, որ ինչի արժանի ես, դրան էլ կհասնես: Միշտ ասում էր, որ երեխային չի կարելի զոռով տանել ինչ-որ ուղղությամբ. ուր գնալու է, կգնա: Երեւի իր կյանքի փորձից էր ասում: Նա 13 տարեկանից մենակ է եղել ու հասել նրան, ինչին պետք է հասներ:

«Հիշում եմ լքված մի թոնիր, բերանին մամռոտած մի խուփ»

Հայրս հասարակ գյուղացի էր: Նա միշտ ասում էր. «Ոնց գյուղացի եղել եմ, այդպես էլ կամ» ու միշտ պարծենում էր դրանով: Նա մեծ կուլտուրայի տեր մարդ էր: Երբեք ոչ ոքի սպասեցնել չէր տալիս. միշտ առաջինը ինքն էր գնում հանդիպման:

«Աշխարհում միշտ բաց են եղել դռներս կրնկի վրա...»

Մենք ապրում էինք մի շենքում, որտեղ մի շարք ուրիշ գրողներ էին ապրում: Բոլորն իրար հարեւան էին: Նրանց մասնակցությամբ հավաքներ մեր տանը շատ է եղել: Գալիս էին Պարույր Սեւակը, Վահագն Դավթյանը, Նշան Մուրադյանը: Մեզնից մի հարկ վերեւում ապրում էր արձակագիր Քրիստափոր Թափալցյանը, ներքեւի հարկում Սարմենը: Մեզ հարեւան էր նաեւ բանաստեղծ Արշալույս Սարոյանը: Մեր դռները միշտ բաց էին իրար առաջ: Մի ուրիշ եղանակ էր այդ շենքում, բոհեմական հրաշք էր, որ չգիտեմ երբեւէ կկրկնվի, թե ոչ:

«Միջոցներս... չէ, այս անտեր փողից բան չեմ հասկանում»

Մենք երբեք ապահով, առավել եւս՝ հարուստ կյանքով չենք ապրել: «Գրքից գիրք» էինք ապրում, իսկ հորս գրքերը տպվում էին 4-5 տարին մեկ անգամ: Այդ շենքում, որտեղ ապրում էինք, բոլորն իրարից պարտքով փող էին վերցնում, բայց դրանից չէին ամաչում. էդպես էին ապրում, հասկանո՞ւմ եք: «Պարգեցրու, զտիր խոհերն իմ խառնակ» Հայրս միշտ ասում էր, որ իր բոլոր ստեղծագործություններն իր զավակներն են, եւ ինքը պատասխանատու է դրանց բոլորի համար: Ես իմ աչքով տեսել եմ, թե

ինչպես էր մի բան գրելուց 10-15 րոպե հետո կարդում այն, բարկանում, պատռում էր ու գցում մի կողմ: Էդպես շատ է պատռել:

«Կյանք իմ, դու ձրի ներկայացում, բայց ինչքան թանկ ես նստում վրաս»

Հիշում եմ, որ երբ մեծերով հավաքվում էին մեր տանը, խոսում էին գրականությունից, արվեստից, ընդհանրապես, մարդուց: Թե ուր է նա ձգտում, ուր է գնում, ժամանակը նրան ուր է տանում, ինչ է պետք մարդ մնալու համար: Նրանք տեսնում էին, որ քաղաքակրթությունը մարդու մեջ սպանում է լավագույն հատկանիշները: Նրանք վախենում, սարսափում էին հագած-կապած, բայց դատարկ ու կաղապարված մարդկանցից:

«Մորս ծաղիկ ծոցի մեջ կար մի ծիվ-ծիվ Հայաստան»

Այդ մարդիկ Հայաստանի ապագայով էին ապրում: Հայրս իր հայրենիքը միշտ համեմատել է մոր հետ: Իր երկրի ճակատագրով մտահոգված է եղել միշտ: Նա այն համոզման էր, որ մենք եղել ենք, կանք ու կլինենք, չնայած գիտեր, որ դժվարին ճանապարհ է սպասվում: Նա ասում էր, որ եթե ժողովուրդը իր հոգով բարձր է, ուրեմն կա: Հիմա մեր ազգը հոգևոր հայր չունի: Սահյանը, օրինակ, կարող էր այսօր մի բան ասել, որ ոչ մեկը չի ասում: Բայց քանի որ դրա հնարավորությունը չկա, հիշենք նրա խոսքերը. «Իմ երգերում ինձ ման եկեք. ես ուրիշ տեղ չկամ»:

Համոն ու Մերոն

Համո Սահյանը զանգահարում է Մերո Խանզադյանին: Լսափողը վերցնում է Մերոյի որդին.

-Մերոն տա՞նն է...

-Չէ՛,- կտրուկ պատասխանում է որդին: Հետևում է Համոյի ստուգող հարցը.

-Ո՞վ ասաց...

-Ինքը,- լինում է պատասխանը: